**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**

# ՀՐԱՄԱՆ

«06» Դեկտեմբերի 2018 թվականի N 136-Ա

## ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սևան-Հրազդան համակարգի շահագործման արդյունավետության բարձրացման, Սևանա լճից ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 436-Ա որոշմամբ սահմանված կարգով բաց թողնված ջրի առավել արդյունավետ օգտագործման, հետագա աշխատանքների բարելավման և մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2018 թվականի հունիսի 4-ի N 23.20/[451440]-18 արձանագրության 9-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ (Խումբ) և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Խմբի ղեկավարին՝

   ա. հսկողության տակ պահել Սևանա լճից ոռոգման նպատակով բաց թողնվող ջրի առավել արդյունավետ օգտագործման խնդիրները և կատարված աշխատանքների վերաբերյալ յուրաքանչյուր ամիս ներկայացնել տեղեկատվություն:

   բ. վեցամսյա ժամկետում ապահովել ջրային ոլորտի խնդիրների քննարկումները և լուծման առաջարկների ներկայացումը:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի հունիսի 26-ի № 75-Ա և 2018 թվականի հուլիսի 25-ի № 97-Ա հրամանները:

4. Խմբի նիստերի արձանագրությունները ներկայացնել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտե:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

11/6/2018

X

VERIFIED OCSP 06-Nov-18 15:53:39 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
06 մայիսի 2018 թվականի № 136-Ա հրամանի

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

## ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

| | |
|---|---|
| Վարդան Գևորգյան | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ (Խմբի ղեկավար) |
| Տիգրան Արզումանյան | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ |
| Յուրի Ջավադյան | ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ |
| Աշոտ Ուլիխանյան | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ |
| Սեդա Շահինյան | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետ |
| Խաչիկ Հարությունյան | ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ |
| Էդգար Միսակյան | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի հիդրոլոգիայի կենտրոնի պետ |
| Դավիթ Մեջլումյան | ՀՀ գյուղատնտեսության նախարարության հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության մելիորացիայի բաժնի պետ |
| Հարություն Գուլյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի օգնական |
| Վահան Դավթյան | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի իրավախորհրդատու |

| | |
|---|---|
| Մնացական Մնացականյան | «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |
| Գարեգին Բաղդասարյան | «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետ |
| Պարույր Հակոբյան | «Արփա-Սևան» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն |
| Միհրան Հովհաննիսյան | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի նախագահի տեղակալ |
| Էդուարդ Սարգսյան | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ |
| Կարեն Դադոյան | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի շահագործման և պահպանման ճարտարագետ |
| Միեր Եղիազարյան | ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| Կարեն Հովսեփյան | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի առաջատար մասնագետ (Խմբի քարտուղար) |